

---

# Առցանց հարցում

## Կազմակերպության անվանումը և կազմակերպչի անունը:

Ինֆորմացիայի ազատության կենտրոն

## Պետական գրանցման համար:

21117101863

## Ղեկավարի անուն, ազգանուն:

Շուշան Դոյրոյան

## Էլ. փոստի հասցե:

foi@foi.am

## Հեռախոսահամար:

37410560360

## Ձեր հարցումը:

Հարգելի պարոն Սիմոնյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածներով և §Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում եմք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Ո՞վ է Ձեր գերատեսչությունում տեղեկատվության ազատության համար պատասխանատու պաշտոնատար անձը (խնդրում եմք նշել անունը, ազգանունը, իր հետ կապի միջոցները),
2. Տեղադրված է արդյոք ՏԱ համար պատասխանատու պաշտոնատար անձի մասին տեղեկատվությունը Ձեր գերատեսչության կայքում (եթե այո, ապա խնդրում եմք նշել հիպերհղումը),
3. խնդրում եմք տրամադրել այն իրավական ակտի պատճենը, որով նշանակվել է ՏԱ համար պատասխանատու պաշտոնատար անձը:

§Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում եմք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Հարգանքով՝

ԻԱԿ Նախագահ  
Շուշան Դոյրոյան

## Իրավաբանական հասցե:

Երեւան, 0010, Փ. Բյուզանդի 1/3, 4-րդ հարկ



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

0201 ք. Աշտարակ, Վ.Պետրոսյան 4, Հեռ/ֆաքս (+374 232) 3 22 51  
0201 г. Аштарак, В.Петросяна 4, тел /факс (+374 232) 3 22 51  
0201 с. Ashtarak, V.Petrosyan 4, tel /fax (+374 232) 3 22 51 e-mail aragatsotn@mta.gov.am

\_\_\_\_\_ N \_\_\_\_\_

Ի պատասխան 2018-06-13, թիվ 01/19/3679-18 գրության

„Ինֆորմացիայի ազատության կենտրոն,, ՀԿ-ի  
նախագահ Շուշան Դոյրոյանին

### Հարգելի տիկին Դոյրոյան

Տեղեկացնում ենք, որ ՀՀ Արագածոտնի մարզպետարանում տեղեկատվության ազատության համար պատասխանատու պաշտոնատար անձը մարզպետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Սաթենիկ Զորյանն է: Հեռախոս՝ /0232/3-42-26, էլեկտրոնային հասցե՝ [aragatsotn.press@mta.gov.am](mailto:aragatsotn.press@mta.gov.am):

Տեղեկատվության ազատության համար պատասխանատու պաշտոնատար անձի մասին տեղեկատվությունը տեղադրված է մարզպետարանի պաշտոնական կայքում՝ **Դիմեք մեզ** բաժնի Մարզպետարանի պաշտոնական կայքում տեղադրված տեղեկությունները պարզաբանելու իրավասություն ունեցող անձի կոնտակտային տվյալները ենթաբաժնում:

Հարգանքով՝

Ա. Սիմոնյան